«ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 30 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

*2023-2028*թթ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Հաստատության գործունեությունը---------- էջ1-11
2. Իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը----- էջ12-21
3. Նպատակների և խնդիրների սահմանումը----- ---------- էջ21-24
4. Սահմանված նպատակների և խնդիրների ----- ----------էջ22-25
   իրականացումն ապահովող գործողությունների

միջոցառումների ժամանակացույցը

5. Պատասխանատուները------ ---------- -- էջ26-32
6. Արդյունքների գնահատման չափանիշները, Ռիսկերը --- էջ 33-37
7. Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և

նյութատեխնիկական պարագաները ----- էջ 39

ՆԱԽԱԲԱՆ

Ըստ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի կազմակերպական հիմքը դպրոցի զարգացման ծրագիրն է, որը նպատակաուղղված է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետական ության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորմանը:

Ժամանակակից իրականությունը պահանջում է դպրոցի այնպիսի շրջանավարտ,որը ընդունակ կլինի օբյեկտիվորեն գնահատել իր իրական հնարավորությունները,պատրաստ կլինի մասնագիտական ինքնակողմնորոշման,կյանքում ինքնաիրագործման,որը կկարողանա օգտագործել իր գիտելիքները և կարողությունները,իր սեփական գիտակից ընտրությունը կատարել կյանքում:Արդի կրթական համակարգը պահանջում է դաստիարակել մրցունակ ,ազատ շուկայական հարաբերություններում հաղորդակցական, հանրամշակութային արժեքներ ստեղծող և պահպանող,տարբեր արտադրական, հասարակական հարա բերություններում ճիշտ կողմնորոշվող անձ: Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է,որի գլխավոր նպատակներից է սովորողներին ամբողջական գիտելիքներ տալը,նրանց ճանաչողական սոցիալական և անհատական կարողությունները ու հմտությունները ձևավորելն ու զարգացնելը,ազգային ու համամարդկային արժեքներ կրող,սոցիալապես ակտիվ անձ և քազաքացի դաստիարակելը,նրանց անձնայի որակները բացահայտելը և սեփական ներուժին համապատասխան ուսումնական, աշխատանքային և գործունեության այլ տեսակների մեջ մասնակցությունը ապահովելը,հայրենիքի սեփական ժողովրդի պատմության, ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ սովորողի հարգանքն ու հպարտությունը ամրապնդելը,սակայն այսօր առավել կարևոր է դառնում նրանց ստեղծագործող անձի ձևավորման գործընթացի նպատակադրված,համակարգված և արդյունավետ ղեկավարումը,ինչը կօգնի նրանց առավել զարգացնել և նախապատրաստել հիմնա կան սոցիալական գործառույթներ կատարելուն:Տեխնոլոգիական և նորարարական արագ զարգացող աշխարհին զուհագեռ ընթացք ապահովելու համար անհրաժեշտ է հանրակրթական դպրոցների համընթաց մեթոդների կիրառումը և իրացումը ;

«Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց»ՊՈԱԿ-ի 2023-2028 թթ. ԶԾ-ը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22. 09. 2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատել»ու մասին հրաման N35-Ն պահանջներին համապատասխան:

1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ պետական քաղաքականության հիմքը ազգային դպրոցն է, որի կազմակերպական հիմքը դպրոցի զարգացման ծրագիրն է, որը նպատակաուղղված է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված, մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորմանը:

Զարգացման ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 10-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները:

Ծրագրի մշակման հիմքում ընկած են կրթության ոլորտը կարգավորող վերը թվարկված իրավական ակտերը .

- ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքը:
- ՀՀ կրթության զարգացման պետական ծրագիրը
- Կրթության մասին ՀՀ օրենքը
- Հանրակրթության Մասին ՀՀ օրենքը
- Լեզվի մասին ՀՀ օրենքը
- ՊՈԱԿ-ի մասին ՀՀ օրենքը
- Երեխաների իրավունքների մասին ՀՀ օրենքը
- Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան
- Դպրոցի կանոնադրությունը
- Կրթակարգ

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:
Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք:

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Հայաստանի Հանրապետությունում հանրակրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

՝Դպրոցի գործունեությունը ըստ ուղղությունների ենթդրում է.

- Ադմինիստրատիվ /վարչական/ աշխատանք
- Ուսումնական գործընթացի կենսագործում
- Ուսումնաօժանդակ գործառույթի իրականացում
- Դաստիարակչական աշխատանքների կազմակերպում
- Ուսումնադիտողական եվ վերահսկողական գործառույթ
- Աշխատանք մասնախմբի հետ
- Կազմակերպչական աշխատանքներ.մատենավարություն
- Աշխատանք ծնողների հետ
- Վարչատնտեսական աշխատանքների կազմակերպում
- Ֆինանսատնտեսական գործունեություն
- Համադպրոցական միջոցառումներ
- Մանկավարժական խորհրդի նիստեր

ա) Դպրոցն ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում

Դպրոցն իրականացնում է հիմնական կրթություն, որը հանդիսանում է պարտադիր կրթության երկրորդմակարդակը և ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին և առաջին և երկրորդ աստիճանները:
Իրականացնում է ռուսերեն լեզվի խորացված ուսուցում,աշխատում է 5-օրյա, միահերթ աշխատանքային շաբաթով:
Դպրոցն իրականացնում է ներառական կրթություն :
Համաձայն ՀՀ ԿԳՄՍ կողմից տրված Ա N 0562 և Ա N լիցենզիաների դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը.

- Տարրական ընդհանուր -110 սահմանային տեղով
- Հիմնական ընդհանուր -150 սահմանային տեղով

2018-2019թթ, ուստարում դպրոցը կոմպլեկտավորվել է 11 դասարան 181 աշակերտով;

Կրթական հաստատությունների,մասնավորապես՝ <<Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի առաջիկա հինգ տարիների համար նախատեսված զարգացման ծրագրով դպրոցի առաքելությունը նպատակների հետ միասին, դա ստեղծագործ սովորողի՝ որպես անհատի 21-րդ դարի կոմպետենտ (կարողունակ) ,գլոբալիզացիայի մարտահրավերներին պատրաստ, համաշխարհային աշխատաշուկայում կողմնորոշվող և մրցունակ, մարդասիրության ոգով դաստիարակված ՀՀ քաղաքացու ձևավորումն է:

Դպրոցը հանդիսանում է առաջնային օղակ,սկզբնակետ կրթության անընդհատ շարունակվող և կատարելագործման գործընթացում:Կրթության բնագա վառում ժամանակակից մարտահրավերների հաղթահարումը և առաջխաղացումը տեղի են ունենում հնի վերափոխման, մանկավարժությանն ու կրթությանն բոլորո- վորին նոր,հաճախ դժվար ընդունվող սկզբունքային մոտեցումների կիրառման, այլ բովանդակություն հաղորդելու միջոցով: Աշակերտները ոչ միայն մտավոր, այլև սոցիալական և հուզական (էմոցիոնալ) անհատակա նություններ են, և այս ամենն ազդում է նրանց սովորելու արդյունավետության վրա:

Հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի՝

- մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը.
- մարդկային արժանապատվության պահպանմանը
- իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան
- ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը.
- ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը.
- մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը.
- ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը.
- որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

Դպրոցի առաքելությունը կայանում է հիմնականում վերը թվարկված սկզբունքային կետերի իրականացման,պահպանման և իրագործման մեջ:

- ✓ Ապահովել պետության կրթական քաղաքականության միտումներին,համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխանող ուսումնառություն
- ✓ Ապահովել սովորողների ստեղծագործական ընդունակությունների զարգացումը կազմակերպումը, ստեղծագործական գործնեության իրականացումը, քննադատական վերլուծական մտածողության անհատական ունակությունների զարգացումը
- ✓ Ապահովել բարենպաստ հոգեբանա-կրթական միջավայրի յուրաքանչյուր սովորողի համար:
- ✓ Ապահովել օժտված և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տարբերակված, խորացված ուսուցման կազմակերպման համար բարենպաստ պայմանների ստեղծում:
- ✓ Ապահովել հոգևոր-մշակութային բարձր արժեքների ուսուցանում
- ✓ Ապահովել ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպում արմատավորում:
- ✓ Ուսման բարձր որակի ապահովում, արդյունավետ և ժամանակակից կրթության իրականացում:
- ✓ Ձևավորել կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման,կրթության անահատականացման շնորհիվ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմաններ

Նպատակն է՝.

- ✓ Սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներով նկարագրված կարողունակությունների,դիրքորոշումների և արժեքների ձևավորում
- ✓ Նպաստել հիմնական դպրոցի գործարկվող համակարգերի ու ընթացակարգերի կատարելագործմանը
- ✓ Ապահովել աշակերտների կրթական կարիքների բավարարումը՝ղեկավարվելով հանրակրթության պետական չափորոշիչներով:
- ✓ Կրթական միջավայրում բուլինգի նվազեցման համակարգային մոտեցում
- ✓ Ապապիովել սովորողների մասնագիտական կողմնորոշումը

Խնդիրներն են՝

- ✓ Հազթահարել կրթական համակարգում առկա հիմնախնդիրները՝ձևավորելով որակյալ կրթական միջավայր
- ✓ Կենտրոնացնել առկա ռեսուրսները և առավել արդյունավետ օգտագործել դրանք ի շահ դպրոցի զարգացմանը
- ✓ Արդիականացնել և վերազինել դպրոցի նյութատեխնիկական միջոցները
- ✓ Առարկայական կաբինետների վերազինում
- ✓ Դպրոցում ստեղծել առարկայական լաբորատորիաներ
- ✓ Աշակերտների թվի ավելացում
- ✓ Ապահովել սովորողների կարողունակությունների ,դիրքորոշումների և արժեքների զարգացումը
- ✓ Դպրոցի ծնողական և աշակերտական խորհուրդների հետ համագործակցության բարելավում
- ✓ Դպրոցի գործնեության մշտադիտարկում և ներդպրոցական վերահսկողություն
- ✓ Նպաստել ուսուցիչների տարակարգ ձեռք բերելուն
- ✓ Խթանել ուսուցիչների կամավոր ատեստավորման մասնակցությունը

Սպասվելիք արդյունքներն ապահովելու համար վճռորոշ է դպրոցում առկա ստեղծագոր ծական կարողություններով օժտված մանկավարժների աշխատանքի խթանումը,ընթացիկ Վերապատրաստումները,գիտելիքների ստուգման կամավոր ատեստավորմանը մասնակցելը,հզոր ներուժով երիտասարդ,կրթված և հմուտ ուսուցիչների ներգրավումը ուսումնադաստիարկչական աշխատանքներում՝ապահովելով սերնդափոխության սահուն ընթացք:

Ծրագրված խնդիրների կատարմանը խոչընդոտող հավանական գործոնները

Զարգացման ծրագրի ծրագրավորված գործընթաց իր կատարման ճանապարհին անխուսափելիորեն ենթարկվում է բազմաթիվ արտաքին և ներքին գործոնների ազդեցության, որոնք կարող են այս կամ այն կերպով խոչընդոտել նախաձեռնությանը: Դպրոցի ղեկավարությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձնելու այդ գործոնների՝ դպրոցի գործընթացներում առավելագույնս չեզոքացնելու հնարավորությանը՝ նպատակ հետապնդելով հնարավորինս անշեղորեն կատարել ծրագրված միջոցառումները:

Այդ գործոնների շարքին մասնավորապես հարկ ենք համարում դասել՝

- հավանական վտանգները՝ կապված ծրագրված խնդիրներին համարժեք ֆինանսավորման աղբյուրների սակավության և ֆինանսական ռեսուրսների անբավարարության հետ,
- ծնողի անտարբեր վերաբերմունքը դպրոցի և սեփական երեխայի նկատմամբ,
- հասարակության մեջ բարոյական արժեքների անկման միտումները,
- հասարակության մեջ տարածում գտած այնպիսի բացասական երևույթներն ինչպիսիք են՝ ծխելը, ալկոհոլիզմը, թմրամոլությունը և այլն,
- ԶԼՄ-ների միջոցով բացասական տեղեկատվության արագ տարածումը,
- աշակերտների թվի նվազումը կախված՝
  - ա) ծնելիության անկումից,
  - բ) արտագաղթի մեծացումից,
  - գ) դպրոցի ներքին խնդիրներով չպայմանավորված այլ գործոններից:
- մանկավարժական անձնակազմի անդամների զգալի մասի մոտ առկա սոցիալ-տնտեսական խնդիրների և աշխատանքի բնույթից բխող ինտելեկտուալ ծանրաբեռնվածության և նյարդահոգեբանական լարվածության բացասական համադ-ությունը,
- բազմաթիվ ուսուցիչների կողմից դպրոցի առաջարկվող բարեփոխումներում ընդգրկվելու թույլ մոտիվացիան, քանի որ այն պահանջելու է մի քանի անգամ ավելի ուժ և եռանդ, որը ցավոք չի ապահովվելու մի քանի անգամ ավելի կամ համարժեք ֆինանսական խրախուսում,
- մանկական հանգստի կազմակերպման հետ կապված միջոցառումներին ոչ բավարար մասնակցությունը՝ կինո, թատրոն, թանգարան այցելելու համար անհրաժեշտ բարձր վճարների, դպրոցի սեփական տրանսպորտային միջոցի բացակայության պատճառով

բ) Համապատասխանում է պետության քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբի կարիքներին և հնարավորություններին

<<Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի հեղինակության բարձրացումը, բարեփոխումների նկատմամբ և դպրոցի մանկավարժական կոլեկտիվի ուժերի նկատմամբ եղած վստահության ամրապնդումն ու բարձրացումը այս հնգամյակում դպրոցի առաքելության բաղկացուցիչներից մեկն է լինելու, քանի որ և՛ հասարակական գիտակցության, և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը՝ որակյալ կրթությունը, շարունակում է մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն: Կրթությունն անընդհատ վերափոխվում է, բովանդակությունը կատարելագործվում՝արդի դարաշրջանի սոցիալ-քաղաքական և մանկավարժական պահանջներին:

Հաստատության նպատակն է սույն զարգացման ծրագրի շրջանակներում լինել տեխնոլոգիապես արագ զարգացող աշխարհում մրցունակ գիտելիքներ տրամադրող հեղինակավոր կրթական հաստատություն ՀՀ-ում: Քանի որ ,դպրոցի առանցքային դերակատարները ուսուցիչներն են,ուստի դպրոցին անհրաժեշտ է այնպիսի ուսուցչական անձնակազմ, ովքեր հանձնառու կլինեն իրենց ոչ միայն իրենց գիտելիքները սերունդներին փոխանցելու,այլև կնպաստեն սերունդների ստեղծագործական ընդունակությունների զարգացման առաքելությանը:

գ) Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին

Հաստատության ենթակառուցվածքներն ու հնարավորությունները.

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության։ Դպրոցի ստեղծման տարեթիվը՝1963թ, որպես ռուսաց լեզվի խորացված ուսուցմամբ հիմնական դպրոց; 2007թ,-ին կառուցվել է սպորտային դահլիճը հարակից միջանցքով և ճաշարանը։Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը՝ 2000թ։

Դպրոցը ունի ՀՀ զինանշանով կլոր կնիք։ «Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

- Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, 3303, ք. Գյումրի, Շչեդրին փ.7
- Էլ. փոստ՝ Gyumri30@ schools mail.am Հեռ.՝ +374 0312 3-10-72
- Կազմակերպա-իրավական տեսակը՝ ՊՈԱԿ
- Իրավաբանական տեսակը՝ Ոչ առևտրային
- Հարկայնությունը՝ 2 հարկանի
- Ջեռուցման եղանակը՝ լոկալ ջեռուցման ցանց
- Առանձնասենյակների թիվը՝ 3
- Դասասենյակների թիվը՝ 14
- Առարկայական սենյակ /կաբինետ՝ 8
- Հրաձգարան
- Համակարգչային կաբինետ
- Ինտերնետ կապ առկա է
- Մարզադահլիճ
- Գրադարանի ֆոնդը՝ 290 կտոր գիրք
- Աշխատողների թիվը՝ 38
- Դասարանների թիվը՝ 9
- Աշակերտների թիվը՝ 167
- Բուժսենյակ Պահակակետ
- «Արմաթ» լաբորատորիա

Դպրոցն ունի կահավորված շախմատի սենյակ,որն անվանակոված է դպրոցի շրջանավարտ ՀՀ շախմատի ֆեդրացիայի փոխնախագահ Հովհաննես Խալիկյան անունով,իսկ ՆԶՊ կաբինետը դպրոցի նախկին սան Միքայել Վարդանյանի անվամբ։Դպրոցի ռեսուրսային սենյակը և հարակից սանհանգույցը վերանորոգվել և կահավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ԱՄՆ USAID համագործակցությամբ իրականացվող << Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում >> ծրագրի շրջանակներում։

Անրդկայ ին ռեսու րսներ- Դպրոցն ունի 38 աշխատակից, որոնցից 19-ը՝ ուսուցիչ՝ բարձրագույն մասնագիտական որակավորմամբ,երկարամյա մանկավարժական աշխատանքային փորձով և շարունակական ատեստավորումներին մասնակցած։

Խորհրդակցական մարմիններ

Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կառավարման մարմինը՝ խորհուրդը և խորհրդակցական մարմինները՝ Մանկավարժական խորհուրդ, կառավարման խորհուրդ, ծնողական խորհուրդ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր կանոնադրությունը, աշխատանքային պլանը, գործում է օրենքով և դպրոցի կանոնադրությամբ նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում, կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանք:

2. Իրավիճակի վերլուծություն. ուժեղ և թույլ կողմեր

Դպրոցի շենքային պայմանները

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
❖ Դպրոցը ունի նորակառույց մասնաշենքեր և պայմանները համապատասխանում են անվտանգ շահագործման նորմատիվներին, պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը ❖ Տարածքն առանձնացված է ցանկապատով, կանաչապատված և ասֆալտապատ է: ❖ Հագեցված և կահավորված մեծ մարզադահլիճ ❖ Սանհանգույցները վերանորոգված են ❖ Շենքային պայմանները համա-պատասխանեցված են ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքներին ❖ Առկա է լոկալ (գազի) ջեռուցման համակարգ ❖ Դպրոցի 2 մուտքերում էլ թեքահարթակներ ❖ առկա են շախմատի կահավորվածդասասենյակ ❖ Կահավորված բուժսենյակ ❖ Ճաշարան և խոհանոց ❖ Առկա է պահակակե	❖ Դպրոցն ուն կոսմետիկ վերնորոգման կարիք/պատուհանների,դռների փոխում/: ❖ Դպրոցը չունի հանդիսությունների դահլիճ ❖ Բացակայում է ազդանշանային համակարգը ❖ Տեսահսկման սարքերի բացակայություն ❖ Դպրոցը չունի ապաստարան ❖ Դպրոցի բակը դեռևս ունի կանաչապատելու կարիք ❖ Բացօթյա սպորտհրապարակի բացակայություն

Դպրոցի նյութատեխնիկական բազան

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
❖ Դպրոցում գործում է «Արմաթ» լաբորատորիա՝ համապատասխան գույքով: ❖ Դպրոցի մարզագույքը նոր է	❖ ՍՄԱՐԹ գրատախտակների բացակայություն ❖ Թերհագեցված առարկայական կաբինետներ ❖ Լաբարատորիաների բացակայություն ❖ Թերհագեցված համակարգչային կաբինետ ❖ Ժամանակակից էլեկտրոնային գրադարանի բացակայություն՝ էլեկտրոնային գրադարանի ստեղծման և արդիականացման (էլեկտրոնային ուսումնական նյութեր և գրականություն QR կոդերով): ❖ Թերհագեցած գրադարանային ֆոնդ ❖ ընթերցասրահի բացակայություն ❖ Կա Խոհանոցային սարքավորումների թարմացման և համալրման անհրաժեշտություն ❖ Դպրցը չունի անհատական պաշտպանության միջոցներ (հակագազ, շնչադիմակ):

Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
- Կառավարման խորհուրդը մշտապես գործում է դպրոցի կանոնադրությամբ և սահմանված կարգով՝ իրեն վերապահված գործառույթներին համապատասխան: Նրա գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը, խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում, պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին: Մանկավարժական խորհուրդը համալրված է փորձառու և որակյալ մասնագետներով: Խորհուրդը ձևավորված է մանկավարժներից: Բոլորն ունեն բարձրագույն մասնագիտական որակավորում : - Աշակերտական խորհուրդը գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները և օժանդակում դրանց իրագործմանը: Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացնում են հանդիպումներ սովորողների հետ և լուծում տալիս խնդիրներին: - Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիա- րակչական աշխատանքներին: Սերտ համագործակցում է դպրոցի հետ: Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների աջակցությամբ կազմակերպում է բազում էքսկուրսիաներ, այցելություններ դեպի թանգարաններ և այլ միջոցառումներ:	- Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ և շրջանավարտների խորհուրդ: - Հանրապետական և միջազգային գիտաժողովներին, սեմինարներին վեբինարներին ցածր մասնակցություն: - Պասիվություն տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից անցկացվող սեմինարներին:

Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցը համագործակցում է ❖ ԿԳՄՍ նախարարության ❖ ԿՏԱԿ-ի ❖ ԿՁՆԱԿ-ի ❖ ԳԹԿ-ի, ❖ Շիրակի մարզպետարանի ❖ Գյումրու համայնքապետարանի, ❖ ԱԻՆ-ի, ՊՆ-ի ❖ ՏՄԱԿ-ի ❖ Շիրակի ՏՄԱԿ-ի ❖ <<ՀՈՒՅՍԻ ԿԱՄՈՒՐՋ>> ❖ <<ԿԱՐԻՏԱՍ >> ❖ <<ՆՈՐ ԼՈՒՅՍ >> ՀԿ-ների հետ ՀՀ կառավարության, գրադարանների, իրավապահ մարմինների, «Ինտերակտիվ» կրթության զարգացման հիմնադրամի, մեր դպրոցի շրջանավարտների և տարբեր հասարակական կազմակերպությունների հետ:	❖ Պասիվ համագործակցություն նախկին շրջանավարտների հետ ❖ Կրթության ոլորտի կազմակերպությունների հետ համագործակցութան,ոլորտով հետաքրքրվողների ներգրավվածության պասսիվություն: ❖ Հոգաբարձուների և շրջանավարտների խորհրդի բացակայություն: ❖ Համագործակցության պասիվություն արտերկրի դպրոցների հետ

Հաստատության ուսումնական միջավայրը

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Ուսումնական միջավայրը լուսավոր է, ընդարձակ, տրամադրող; Ապահովված են սովորողների առողջության և անվտանգության պահպանման նորմերը, պահպանված է միջավայրի հավասարություն ու հասանելիությունը սովորողների համար՝ այդ թվում հաշմանդամություն ունեցող աշակերտների համար	✚ Մենթալ թվաբանության ✚ ծրագրավորման խմբակների բացակայություն ✚ «Օլիմպիական խմբակներ»-ի բացակայություն ✚ աուդիո- դասարանների բացակայություն ✚ Շնորհալիների ակումբի բացակայություն ✚ Գրադարանն ունի ժամանակակից գրողների գրքերի կարիք

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացում ապահովող միջոցառումներ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցի մանկավարժների գերակշիռ մասը ունի մանկավարժական երկար և հարուստ աշխատանքային փորձ,պարբերաբար մասնակցում են մասնագիտական որակավորումների համար կազմակերպվող սեմինարների, վեբինարների և ունեն համապատասխան վկայականներ, հավաստագրեր:	«Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթ-անվանակարգի բացակայություն տարակարգի և կամավոր ատեստավորմանը մասնակցելու ցանկության պասիվություն Տեղեկատվական տեխնո-լոգիաների ցածր կիրառություն Ուսուցիչների կողմից տեսա-դասերի բացակայություն Էլեկտրոնային դասերի պակաս Փորձի փոխանակման պակաս առաջատար դպրոցների հետ:

Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի կատարելագործման նպատակով մեր կարծիքով անհրաժեշտ է՝

- մանկավարժների համար դպրոցում ստեղծել տեղեկատվության մի համակարգ, որի միջոցով վերջիններս հնարավորություն կունենան մշտապես համալրելու իրենց գիտելիքները առնվազն հետևյալ ուղղություններով՝
    - դպրոցի և կրթության նկատմամբ նոր պահանջներ,
    - ժամանակակից մանկավարժական նվաճումներ,
    - առաջավոր մանկավարժական փորձ,
    - հոգեբանություն և մանկավարժություն:
- Ակտիվացնել տարրական և միջին դպրոցներում դասավանդող ուսուցիչների կապը,
- փոխադարձ դասալսումների կազմակերպման միջոցով ուսուցիչների միջև պարբերաբար կազմակերպել փորձի փոխանակում,
- Էլեկտրոնային դասերի ստեղծում
- արդյունավետ կազմակերպել և առավելագույնս օգտագործել կազմակերպված վերապատրաստումների և ատեստավորումների արդյունքները:

  Այս ուղղությամբ անհրաժեշտ է առհասարակ դպրոցում պարտադիր պայման և ավանդույթ դարձնել ցանկացած ուսուցչի կամ դպրոցի ղեկավարի կողմից վերապատրաստումների, դասընթացների, սեմինարների, հանդիպումների, կոնֆերանսների, ժողովների մասնակցության արդյունքում կամցանկացած այլ միջոցներով ստացված տեղեկատվության էական կամ ընդհանուր բաղադրիչների

և սկզբունքների փոխանցումն ամբողջ մանկավարժական անձնակազմին՝ դպրոցում կազմակերպվող սեմինար քննարկումների միջոցով,

- ուսուցիչների հետ աշխատանքում առավել շեշտադրել և ընդգծել վերջիններիս կողմից կիրառվող դասավանդման նոր ձևերն ու մեթոդները,
- անընդհատ իրականացնել ուսուցիչների միջև համագործակցության մթնոլորտի կատարելագործանը նպաստող գործողություններ և միջոցառումներ,
- մշակել դպրոցում առկա խնդիրների՝ ուսուցիչների հետ համատեղ լուծմանն ուղղված մեխանիզմներ՝ նպատակ ունենալով ուսուցիչների մոտ ստեղծել բավարար վստահություն և անձնակազմի լիարժեք անդամ զգալու հնարավորություն,
- հաճախակի կազմակերպվող քննարկումների միջոցով ուսուցիչների մոտ ձևավորել սեփական գործողությունները ինքնավերլուծելու և ինքնագնահատելու մշակույթ,
- աջակցել ուսուցիչներին իրենց ինքնակրթության գործում,
- անընդհատ մոնիթորինգի ենթարկել դպրոցի տնօրենի տեղակալների կողմից դպրոցի մանկավարժների հետ տարվող անհատական աշխատանքների որակն ու սահմանված սկզբունքներին համապատասխանությունը,
- մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել և օբյեկտիվորեն գնահատել դպրոցի մեթոդական միավորումների կողմից դպրոցի զարգացման ծրագրում նշված նպատակների իրագործմանն ուղղված աշխատանքները,

Հաստատության սրամտրած կրթության որակը	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ Երկարամյա մանկավարժական աշխատանքային փորձով ուսուցիչներ; Մասնակցություն մարզային և հանրապետական տարբեր սպորտաձևերի՝բազկամարտի, բասկետբոլի,ֆուտբոլի,թեթև ատլետիկայի, շախմատի մրցույթներին և պատվավոր հորիզոնականների գրավում Մասնակցություն <<ՄԵՂՈՒ>> և <<ԿԵՆԳՈՒՐՈՒ>> առցանց մրցույթներին	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ Միջազգային օլիմպիադաներին մասնակցության պասիվություն։ Հանրապետական օլիմպիադաներին մասնակցության սակավություն։ Բացառիկ կարողություններով աշակերտների սակավություն։ Ընթերցանության հանդեպ հետաքրքրության պակաս Սոցիալակա կայքերից կախված

Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Առցանց ZOOM, TEAMS ուսուցման էլեկտրոնային հարթակների կիրառում; Դպրոցն ունի ինտերնետ կապ,որը հնարավորություն է տալիս ոչ միայն աշակերտներին, այլև ուսուցիչներին օգտվել տարբեր էլեկտրոնային կրթական հարթակներից, անհրաժեշտ ռեսուրսներից՝ մասնագիտորեն կատարելագործվելու, դասն ավելի հագեցած ու բավանդակալից անցկացնելու համար; «Արմաթ» լաբորատորիան ակտիվորեն գործում է;	Թերիագեցված համակարգչային դասասենյակ SMART դասասենյակների ստեղծում SMART գրատախտակների բացակայություն Ռոբոտաշինության կաբինետի բացակայություն ԱՌԻԴԻՈ- դասասենյակների բացակայություն

Տեղեկատվական տեխնոլոգիաների և նորարարությունների ներդնումը և կիրառումը կնպաստի մանկավարժական համակազմի մասնագիտական կատարելագործմանը և կնպաստի ուսումնառության արդյունավետ գործընթացի կազմակերպմանը:
Անհրաժեշտ է դպրոցում ստեղծել ինտերակտիվ ուսուցման դասասենյակ՝ գրատախտակ-պրոյեկտորով և վերջին սերնդի համակարգիչներով:
Դպրոցում ստեղծել համակարգչային հագեցած կաբինետ՝համալրված դյուրակիր համակարգիչներով և նորագույն սարքավորումներով,որը հնարավորություն կստեղծի յուրաքնաչյուր աշակերտի ներգրավել աշխատանքի մեջ՝առանց նախնական պատրաստվածության,կնպաստի ակտիվ ուսումնառության կազմակերպմանը,ուսուցիչների փորձի փոխանակմանը,արդյունավետ կլինեն և խորհրդակցությունների,սեմինարների,ուսուցիչների գործունեության ծավալման համար:
Ինտերակտիվ ուսուցման դասասենյակը կծառայի նաև ներառարկայական համակցված դասերի կազմակերպմանը:
Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքն առավել արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է օգտվել նշված կայքերից՝միաժամանակ դառնալով և՝ մասնակից և՝ կատարող.
<<ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ>> կայք http://esource.armedu.am/
<<ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ>>պորտալ կայք http://www.armedu.am/
<<ՊԱՇԱՐՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆ>> կայք՝http://lib.armedu.am/
<<ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ>> համակարգ http://learning.armedu.am/

Դպրոցի առաջիկա հինգ տարիների գործունեությունը պետք ապահովվի հետևյալ կրթական /հանրակրթական/ օրենսդրության ոլորտը կանոնակարգող փաստաթղթերի առկայությամբ.

1. Աշակերտի անձնական գործ
2. Աշակերտական շարժի մատյան
3. Աշխատողների հրամանագիրք
4. Աշակերտների հրամանագիրք
5. Աշխատողի անձնական գործ
6. Դպրոցի խորհրդի արձանագրությունների մատյան
7. Մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյան
8. Առարկայական մեթոդական միավորման արձանագրությունների մատյան
9. Տարիֆիկացիոն ձևաթղթերի մատյան
10. Ուսուցչի բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան
11. Սովորողի տեղափոխման թերթիկ
12. Դասամատյաններ
13. Ուսումնական պարապմունքների ժամատախտակ /դասացուցակ/
14. Ուսումնադաստիարակչական աշխատանքների և համադպրոցական միջոցառումների տարեկան ծրագիր
15. Տնօրենի, մեթոդական միավորման և դասարանի ղեկավարի տարեկան աշխատանքների ծրագիր
16. Պետական ուսումնական առարկայական չափորոշիչներ
17. Պետական ուսումնական առարկայական ծրագրեր
18. Ուսումնական առարկաների թեմատիկ պլանավորումներ և սխեմաներ
19. Կիսամյակային և տարեկան ուսումնական պլան
20. Աշակերտական համակազմի մասին տեղեկանք /կոմպլեկտավորում/
21. Սովորողների կիսամյակային և տարեկան շարժի ու առաջադիմության տեղեկագրեր
22. Աշակերտի առաջադիմության և փոխադրման տեղեկագրեր
23. Ուսումնական հաստատության սովորողի ծնողի և ուսումնական հաստատության միջև կնքվող անվճար և վճարովի կրթական ծառայությունների մատուցման մասին պայմանագրերի գրանցման գրանցամատյան
24. Դրամարկղային գիրք
25. Կազմակերպության հաշվեկշիռ
26. Ֆինանսական հաշվետվություն
27. Գործունեության հաշվետվություն
28. Պահպանման ծախսերի նախահաշիվ
29. Հաստիքային ցուցակ

1. Հաստիքային ցուցակ
2. Հիմնական միջոցների հաշվառման գիրք /գույքամատյան/
3. Ոչ հիմնական միջոցների /փոքրարժեք և արագամաշ առարկաների/ գրանցամատյան
4. Աշխատողների ամսական հաշվարկվելիք/վճարվելիք/աշխատավարձի հաշվետախտակ:
5. Փաստաթղթերի ելքի մատյան
6. Փաստաթղթերի մուտքի մատյան
7. Կիսամյակային և տարեկան ժամաքանակի բաշխման տեղեկանք /դասաբաշխում/
8. Գրադարանային ֆոնդի մայր մատյան
9. Գրադարանի գրքամատյան
10. Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր
11. Աշխատավարձի հաշվարկային տեղեկագիր
12. Աշխատավարձի վճարային տեղեկագիր
13. Աշխատողների հաճախումների հաշվառման մատյան
14. Աշխատանքային պայմանագրեր
15. Աշխատանքային պայմանագրերի համաձայնագրեր
16. Լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագրեր
17. Կազմակերպության կանոնադրություն
18. Ներքին կարգապահական կանոններ
19. Ծնողական խորհրդի արձանագրությունների մատյան
20. Հերթապահության ժամանակացույց
21. Պարտադիր բժշկական զննության ժամանակացույց
22. Ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգ

Հաստատության առկա հիմնախնդիրները

ՈԼՈՐՏ	ԽՆԴԻՐՆԵՐ
Կառավարման և խորհրդակցական մարմիններ	Շրջանավարտների խորհրդի ստեղծում Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև համագործակցության ամրապնդում:
Մանկավարժական համակազմ	Մանկավարժական համակազմից կամավոր ատեստավորմանը, տարակարգին, «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին դիմելու ցանկության խթանում: Մասնագիտական որակի և դասավանդման մեթոդների արդիականացում և բարելավում:
Աշակերտական համակազմ	Կոմպետենտ (կարողունակ) քաղաքացիների ձևավորում, ովքեր կլինեն մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ և սոցիումին ինտեգրված:
Ծնողական համակազմ	Պասսիվ են տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից անցկացվող սեմինարներին: Սոցիալական անապահով վիճակից ելնելով պասսիվություն են ցուցաբերում որոշ նախաձեռնություններին:

Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	Ուսվորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվության դրսևորելու հմտությունների զարգացում: Համագործակցության շրջանակի ընդլայնում: Տեղեկատվության դարաշրջանի կայացում:

Ուսումնական միջավայր	Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում:
Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	Բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում: ՠՍովորողների մասնագիտական կողնորոշմանը միտված միջոցառումների ընդլայնում: Հանրակրթության պետական չափորոշչային պահանջների նվազագույն շեմը չհաղթահարող աշակերտների համար լրացուցիչ աշխատանքների կազմակերպում:
Տեխնոլոգիաներ և նորարարություն	Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում, մեդիագրագիտության կարևորում ու զարգացում, մենթորական համակարգի համալրում:
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր	Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ապահովել ուսուցիչների ակտիվ մասնակցությունը:

Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ նոխորդ 3 և ընթացիկ տարվա համար

ՈՒս. Տարի	2019-2020թթ.	2020-2021թթ.	2021-2022թթ.	2022-2023թթ.	Փոփոխության դինամիկան (աճ/ նվազում)
Սովորողների ընդհանուր թիվը ուս. տարվա սկզբին	194	197	170	168	ՆՎԱԶՈՒՄ



Ուսուցիչների տարիքային բաշխվածությունը նախորդ 3 տարիների համար

Ուս.Տարի թթ.	2019-2020	2020-2021	2021-2022	2022-2023	Դինամիկա
Մինչև 29 տարեկան	2	3	2	---	աճ
30-39 տարեկան	4	4	4	6	աճ
40-49 տարեկան	1	2	1	2	աճ
50-59 տարեկան	2	1	3	3	նվազում
60 տարեկան և ավելի	6	2	7	8	աճ
Ուսուցիչների թիվը ընդամենը	15	12	17	19	աճ

Այս պահի դրությամբ դպրոցը ունի 19 ուսուցիչ

Այս պահի դրությամբ դպրոցը ունի 2 վարչական աշխատող

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ՝ ՁԵԱՁԱՓԻ 3-8 ԲԱՂԱԴՐՅՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ



Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Լաբորատորիաների Ստեղծում,դասասեն յակների կահավորում:	2023-2026 ուստարի	Հիմնադիր, լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, տնօրեն, տնտեսվար	ԿԽ-ն՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի	Ռիսկեր Ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների բացակայություն, արտաբյուջետային միջոցների բացակայություն, համավարակ, արտակարգ դրություններ:	Հիմնադիր, լիազոր մարմին, բյուջե, Դրամաշնորհային ծրագրեր, հովանավորներ, բարերարներ, արտբյուջետային միջոցներ:
Բակի կանաչապատում, Սպորտհրապարակի բարեկարգում	2023-2028 ուստարի	կառավարման խորհուրդ, տնօրեն, տնտեսվար			
Դպրոցն ունի կոսմետիկ վերանորոգման կարիք, Հանդիսությունների Դահլիճի հիմնանորոգում Ազգանշանային համակարգի տեղադրում, Տեսահսկման սարքա-վորումների տեղադրում	2023-2028 ուստարի,	կառավարման խորհուրդ, տնօրեն, տնտեսվար			

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Գրադարանի արդիականացում	2023-2028 ուստարի	տնօրեն, գրադարանավար	ԿԽ-ն՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի	Ռիսկեր Ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների բացակայություն, արտաբյուջետային միջոցների բացակայություն, համավարակ, արտակարգ դրություններ: Աշակերտ և դասարան թվի նախատեսվածից քիչ աճ:	Հիմնադիր, լիազոր մարմին, բյուջե, Դրամաշնորհային ծրագրեր, հովանավորներ, բարերարներ, արտբյուջետային միջոցներ:
Դպրոցի միջանցքների արդիականացում՝ պահպանելով հին և ազգային, մշակութային արժեքները:	2023-2028 ուստարի	տնօրենություն, ԱԽ, դասղեկներ փոխտնօրեն, տնտեսվար			

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակա Ցույց	Պատասխանա տուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկա կան պարագաները
Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ (անհրաժեշտության դեպքում):	2023-2028 ուստարի	տնօրեն, տնտեսվար	ԿԽ-ն՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակա Ցույցի	Ռիսկեր Ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների բացակայություն, արտաբյուջետային միջոցների բացակայություն, համավարակ, արտակարգ դրություններ: Աշակերտ և դասարան թվի նախատեսվածից քիչ աճ: Ռիսկերը մեղմող գործողություններ Դպրոցի ողջ գործունեության լուսաբանումը՝ որպես աշակերտների ընդունելության խթանման միջոց: Համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների պահպանում:	Հիմնադիր, լիազոր մարմին, բյուջե, Դրամաշնորհային ծրագրեր, հովանավորներ, բարերարներ, արտբյուջետային միջոցներ:
Դպրոցի ջեռուցման համակարգի մարտկոցների, խողովակների նորով փոխարինում կամ վերանորոգում(անհրաժեշտության դեպքում):	2023-2028 ուստարի	լիազոր մարմին, տնօրեն, տնտեսվար			
Ջրահեռացման համակարգի անցկացում:	2023-2024 ուստարի	տնօրեն, տնտեսվար			
Ջինանոցի ազդանշանային համակարգի ապահովում:	2023-2024 Ուստարի	տնօրեն, տնտեսվար			

Կառավարման և խորհրդակցական մարմիններ

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Ստեղծել շրջանավարտների խորհուրդ:	2024-2025 ուստարի	Տնօրեն, փոխտնօրեն կազմակերպիչներ	ԿԽ-ն՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների փևերի ու ժամանակացույցի տնօրեն, փոխտնօրենի	Ռիսկեր Համավարակով պայմանավորված առկա շփումների նվազում, շահագրգիռ կողմերի՝ հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակաս: Ռիսկերը մեղմող գործողություններ Համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների պահպանում, հեռավար հարթակից օգտվելու կարողությունների զարգացում:	
Շարունակել համագործակցությունը կառավարման և խորհրդակցական մարմինների հետ, ապահովել նաև այդ մարմինների փոխհամագործակցությունը:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, դասղեկներ, ԿԽ, կազմակերպիչներ			
Հետևել խորհրդակցական մարմինների գործառույթների պատշաճ կատարմանը, թափանցիկության ապահովմանը:	2023-2028 ուստարի	Տնօրինություն, դասղեկներ, ԿԽ, կազմակերպիչներ			

Մանկավարժական համակազմ					
Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Մանկավարժական համակազմից կամավոր ատեստավորմանը, տարակարգին, «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին դիմելու ցանկության խթանում: Մասնագիտական որակի և դասավանդման մեթոդների արդիականացում և բարելավում: Վերապատրաստումներ, Կամավոր և պարտադիր ատեստավորման գործընթացներ:	2023-2028 ուստարի	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ, ԿԶՆԱԿ	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի տնօրեն, Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ	Ռիսկեր Համավարակով պայմանավորված առկա շփումների նվազում, շահագրգիռ կողմերի հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակաս: Ռիսկերը մեղմող գործողություններ Համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների պահպանում, հեռավար հարթակից օգտվելու կարողությունների զարգացում, ուսուցիչների որակավորման բարձրացման ուղղությամբ աշխատանքների խթանում:	Պետական բյուջե, լիազոր մարմին, ԿԳՄՍ, ԿԶՆԱԿ, ՀՄԿ, ՏՄԱԿ, հասարակական կազմակերպություններ
Սեմինարներ, վեբինարներ, ինքնակրթության, ինքնավերլուծության խթանում, դասավանդման որակների արդիականացում:	2023-2028 ուստարի	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ			
Ուսուցիչների առաջավոր փորձի տարածում, մեթոդական աջակցություն սկսնակ ուսուցիչներին, հանդիպում մենթոր ուսուցիչների հետ:	2023-2028 ուստարի	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ, մենթոր ուսուցիչներ			
Ներդպրոցական վերահսկողություն:	2023-2028 ուստարի	Տնօրեն, տնօրենին կից խորհրդակցական մարմին			
Ուսուցիչների վերապատրաստում, սեմինարներ, առաջավոր փորձի փոխանակում:	2023-2028 ուստարի	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ			

Աշակերտական համակազմ

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պա
Կոմպետենտ (կարողունակ) քաղաքացիների ձևավորում, ովքեր կլինեն մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ և սոցիումին ինտեգրված:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, մանկավարժական համակազմ	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի Տնօրեն, փոխտնօրեն	<u>Ռիսկեր</u> Համավարակով պայմանավորված առկա շփումների նվազում, շահագրգիռ կողմերի՝ հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակաս: <u>Ռիսկերը մեղմող Գործողություններ</u> Համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների պահպանում, հեռավար հարթակից օգտվելու կարողությունների զարգացում, ուսուցիչների որակավորման բարձրացման ուղղությամբ աշխատանքների խթանում:	
Հրապուրիչ կրթական միջավայրի ստեղծում՝ •Սովորողների մոտիվացիայի խթանում •Ուսումնառության որակի բարելավում •Աշակերտական ինքնավարության խթանում •Արժեհամակարգի ձևավորում •Համագործակցային շրջանակների ընդլայնում:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, մանկավարժական համակազմ			
Աջակցություն աշակերտական խորհրդի նախաձեռնություններին: բուլինգի նվազեցման և կանխարգելման միջոցառումներ	2023-2028 ուստարի	Տնօրենություն, մանկավարժական համակազմ դասղեկ			
Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքներ՝ •Նախասիրությունների բացահայտում •Մասնագիտությունների և մարդու բնույթի համապատասխանությունների վերաբերյալ ֆիլմերի դիտում •Ճանաչողական այցեր •Հանդիպումներ:	2023-2028 ուստարի	Տնօրեն, փոխՏնօրեն			

Ծնողական համակազմ

Նպատակների և **խնդիրների** սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Խթանել մասնակցությունը ՀԿ-ների կողմից անցկացվող սեմինարներին, վեբինարներին,հատկապես բուլինգին վերաբերող քննարկումներին	2023-2028 ուստարի	Տնօրենություն, փոխտնօրեն դասղեկներ	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի Տնօրեն, փոխտնօրեն	Ռիսկեր Համավարակով պայմանավորված առկա շփումների նվազում, ծնողների ցանկության պասսիվություն: Ռիսկերը մեղմող Գործողություններ Համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների պահպանում, դպրոցի հետ սերտ համագործակցության ապահովում:	
Սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցության ցուցաբերության ակտիվություն:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, փոխտնօրեն դասղեկներ			
Ներդպրոցական և արտադպրոցական տարբեր միջոցառումներին ակտիվ մասնակցություն: Բուլինգին վերոբերող գրքերի քննարկման	2023-2028 ուստարի	Տնօրենություն, փոխտնօրեն դասղեկներ			
ակտիվ ,ասնակցություն Ներգրավել դպրոցում իրականացվող տարբեր հասարակական աշխատանքներին:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, փոխտնօրեն դասղեկներ			

Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ					
Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Համայնքի հետ համատեղ ծրագրերի իրականացում սովորողների և ծնողների մասնակցությամբ (շաբաթօրյակներ, ծառատունկ և այլն): Համագործակցությունների շրջանակի ընդլայնում: Հանդիպումներ համայնքի	2023-2028 ուստարի	Տնօրենություն փոխտնօրեն դասղեկներ	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի Տնօրեն, փոխտնօրեն ԾԽ, ԱԽ	<u>Ռիսկեր</u> Համավարակով պայմանավորված առկա շփումների նվազումը, համայնքի պասսիվությունը: <u>Ռիսկերը մեղմող Գործողություններ</u> Համաճարակային կանոնների պահպանում, իրազեկել համայքին, ապահովել ակտիվ ներգրավվածությունը, կարևորել դպրոց-համայնք կապը:	
ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների հետ: •Ստեղծել մշակութային, արհեստի և արվեստի խմբակներ	2023-2028 ուստարի	Տնօրենություն փոխտնօրեն, դասղեկների ԾԽ, ԱԽ			
•Անցկացնել ստեղծագործական շարադրությունների մրցույթներ •Կազմակերպել նկարչական մրցույթներ և ցուցահանդես-վաճառքներ՝ համայնքի և ծնողների ներգրավմամբ •Կազմակերպել միջոցառումներ, մշակութային ծրագրերով հանդես գալ մանկատներում և ծերանոցներում, գրադարաններում, թանգարաններում: Պետության կողմից տրամադրած դպրոցական աբոնենտային համակարգի	2023-2028 ուստարի	Տնօրենություն փոխտնօրեն դասղեկներ, ԾԽ, ԱԽ			
կիրառումը՝ խթանելով դպրոց-մշակութային օջախկապը, նպաստելով աշակերտների գեղարվեստական դաստիարակությանն ու ստեղծագործական մտքի զարգացմանը:	2023-2028 ուստարի	Տնօրենություն փոխտնօրեն դասղեկներ, ԾԽ, ԱԽ			

Ուսումնական միջավայր					
Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, փոխտնօրեն դասղեկներ	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի տնօրեն, քաղ. պաշտ. շտաբի պետ	Ռիսկեր Ոչ բավարար ֆինանսական միջոցներ, արտաբյուջեի բացակայություն: Ռիսկերը մեղմող Գործողություններ Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում:	Պետական բյուջե, բարերարներ, հովանավորներ
Անվտանգ ուսումնական միջավայրի ապահովում: Բուլինգի իրազեկման միջոցառումների կազմակերպում (գրքերի քննարկու)	2023-2028 ուստարի	Տնօրենություն, դասղեկներ, քաղպաշտպանության շտաբի պետ			
Լաբորատորիաների, առարկայական կաբինետների համալրում (քիմիական նյութեր): Դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդրում դասապրոցեսում:	2023-2028 ուստարի	Լիազոր մարմին, տնօրեն, տնօրենություն, մանկավարժական համակազմ			

Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների					
Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Կրթության որակի բարելավում, չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովում, աշխատանք օժտված երեխաների հետ: Կրթության բարձր որակի, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում: •Մշտադիտարկումներ՝ վերջնարդյունքների ապահովման դիտարկում •Մնացորդային գիտելիքի ստուգում •Հայտորոշիչ աշխատանքներ:	2023-2028 ուստարի	Տնօրեն, փոխտնօրեն դասղեկներ, մանկավարժական համակազմ	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի Տնօրեն, փոխտնօրեն	Ռիսկեր Համավարակը պայմամավորված՝ սահմանափակումները, սաների թվի պակաս: Ռիսկերը մեղմող Գործողություններ Համաճարակային կանոնների պահպանում, կրթության որակի բարձրացում, նախակրթարանի առօրյայի ու թափանցիկ գործունեության լուսաբանումը սոցիալական էջերում և դպրոցի կայքէջում՝ որպես ընդունելության խթանման միջոց:	Պետական բյուջե, արտաբյուջե
Հանրակրթության պետական չափորոշչային պահանջների նվազագույն շեմը չհաղթահարող աշակերտների համար ուսուցումը խթանող աշխատանքների կազմակերպում:	2023-2028 ուստարի	Տնօրեն, փոխտնօրեն դասղեկներ, մանկավարժական համակազմ			
Դաստիարակության և ուսման բովադակությունն ապահովող անհրաժեշտ պայմանների ստեղծում:	2023-2028 ուստարի	Տնօրեն, տնօրենի փոխտնօրեն դասղեկներ			

Տեխնոլոգիաներ և նորարարություն					
Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում, մեդիագրագիտության կարևորում ու զարգացում, մենթորական համակարգի համալրում:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԿԶՆԱԿ, ՏՄԱԿ, ՀՄԿ	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի Տնօրեն, փոխտնօրեն ԾԽ, ԱԽ	Ռիսկեր Ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների բացակայություն, արտաբյուջետային միջոցների բացակայություն, համավարակ, արտակարգ դրություններ: Աշակերտ և դասարան թվի նախատեսվածից քիչ աճ: Ռիսկերը մեղմող գործողություններ Դպրոցի ողջ գործունեության լուսաբանումը՝ որպես աշակերտների ընդունելության խթանման միջոց: Համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների պահպանում:	Բարերարներ, ՀԿ-ներ, պետական բյուջե, դրամաշնորհային ծրագրեր:
Առարկայական դասասենյակների վերաբացում, ռեսուրսների համալրում, ժամանակակից գրականության ձեռքբերում:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, մանկավարժական համակազմ			
Էլեկտրոնային կրթական ռեսուրսների կիրառում, ստեղծում:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, մանկավարժական համակազմ			
Նոր սերնդի համակարգչային տեխնիկայի համալրում:	2023-2028 ուստարի	Հիմնադիր, լիազոր մարմին, տնօրեն			
Մեդիագրագիտության վերաբերյալ սեմինարների, քննարկումների անցկացում:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, մանկավարժական համակազմ			

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ապահովել ուսուցիչների ակտիվ մասնակցությունը:	2023-2028 ուստարի	Տնօրեն, փոխտնօրեն մ/մ նախագահներ	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի		
e-draft.am կայքի ներկայացում, հանրային քննարկման դրված ակտերի ներկայացում:	2023-2028 ուստարի	Տնօրեն, փոխտնօրեն մ/մ նախագահներ			

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Որակյալ կրթական միջավայր

Վերանորոգված և
Կ ու թատեինիկական
բազայ ով
հագեցված ժամանակակից
դպրոց

իր իրական
հնարավորությունները
օբյեկտիվ գնահատող
աշակերտ

ժողովրդական
սկզբունքներին
Համապատասխան ԱՀԱԿՏ
գործունեություն

ժամանակակից աշխատիի
կարողունակ և մրցունակ
քաղաքացի

Տվյալների բազի
ցուցանիշներ
առարկայական
օլիմպիադաներում

Անձգայինն և համամարդկայինն
արժեքներ կրող, սոցիալապես
ակտիվ անձի և քաղաքացու
դաստիարակություն

Վարքամանագիտության
ինքնակազմակերպում,

նորարարական
տեխնոլոգիաների
ներդրում և կիրառում
դասավանդում

Հմուտ կիրառող
մասնագետներ, նորարար և
ստեղծագործ ուսուցիչներ

Աշակերտների
թվի
ավելացում

Վերահսկողության մեխանիզմները

Յուրաքանչյուր գործողության համար մշակված են վերահսկողության մեխանիզմներ, որոնք հաստատված են խորհրդի կողմից.

➢Յուրաքանչյուր գործողության համար սահմանված են հաշվետվությունների ձևերն ու ժամանակացույցը, որոնք հաստատված են խորհրդի կողմից.

➢Ծրագրի վերահսկողությունն իրականացվում է ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կողմից՝ տարեկան առնվազն երկու անգամ՝ յուրաքանչյուր կիսամյակի վերջում:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հաշվետվությունը պետք է ներառի յուրաքանչյուր կատարողական ցուցանիշի կատարման մասին անհրաժեշտ փաստացի տվյալներ, հիմնավորող փաստաթղթեր, վերլուծություններ, որոնք կցվում են հաշվետվության ձևաչափին: